մանատան բնակիչների հետ, չէր հասնելու որեւիցէ օգտաւէտ վախճանի: Կարօն ինքը շատ լաւ գիտէր այդ, որ ամբոխը գտնւում էր այն վիճակում, ինչ վիճակում լինում են խելագարները կամ հարբածները. նրանք ընկնում են ցեխերի մէջ եւ ամենեւին չեն նկատում իրանց կեղտոտութիւնը. նրանք իրանց գլուխը պատերին են զարկում եւ ամենեւին ցաւ չեն զգում, թէեւ ճակատից արիւն էր հոսում. նրանք փողոցներում թաւալուած ժամանակ՝ ամէն անցնող երեխան ոտքով խփում է, թքում է նրանց վրայ, բայց նրանք հանգիստ պառկած են եւ վիրաւորանք չեն զգում: Կարօն գիտէ՞ր այդ բոլորը: Նա գիտէր, որ ժողովուրդը տանջւում էր նիւթապէս, ուտելու հաց չունէր եւ հագնելու հագուստ, բայց համբերում էր: Նա գիտէր, որ ժողովուրդը տանջւում էր բարոյապէս. շատ անգամ նրա կինը, աղջիկը, տղան զոհւում էին աղայի կրքերին, բայց նա համբերում էր...: Համբերում էր, որովհետեւ իր թշուառութիւնը, իր անպատուութիւնը չէր համարում կարգից դուրս բաներ, այլ մտածում էր՝ թէ այլ կերպ լինել կարող չէր, թէ ինքը հպատակ է, թէ աղան ինչ որ ուզէ, այն պէտք է անէ...:

Ե՛կ, դու փոխի՛ր դարեւոր նախապաշարմունքը: Ի՞նչ կարող ես անել, երբ ամբոխը ինքը չէ բողոքում իր թշուառութիւնների համար, երբ ամէն անբախտութիւններ տանում է նա համբերութեամբ, եւ, — որպէս Կարօն յիշեց՝ իր ճառի մէջ, — տալիս է նրանց մի վերին եւ աստուծոյ նախասահմանութեամբ կարգադրած օրէնքի նշանակութիւն: Ի՞նչ պէտք է անես...:

Միթէ այսպէ՞ս էին իմ դատողութիւններն այն ժամանակ, միթէ այսպէ՞ս էի մտածում ես...: Ո՛չ: Ես ինքս շատ հեռու չէի նոյն նախապաշարմունքներից, որոնք տիրել էին ժողովրդին, որովհետեւ նրա հաւատարիմ զաւակն էի: Ես միայն ծիծաղում էի Կարօյի ցնորքների վրայ, որպէս տասն եւ երկու տարի առաջ, երբ նա դեռ նոր էր փախել հայր Թոդիկի ուսումնարանից եւ աշակերտում էր մի նոր դպրոցի — որսորդ Աւօյի — վարդապետութեանը, վարդապետութեանը այն խորհրդաւոր մարդու, որի ծագումը, հայրենիքը յայտնի չէր, որ ծածկուած էր հասարակ որսորդի դիմակով, որը ներշնչեց կրակոտ պատանիների մէջ նոր հոգի եւ նոր միտք...:

Ընթրիքը թէեւ վերջացաւ խիստ զուարճալի կերպով, բայց ես ամենեւին ուրախ լինել չկարողացայ, այդ պատճառով շատ գոհ եղայ, երբ տղերքը շուտով պառկեցին քնելու: Բայց ես քնել չկարողացայ, եւ դուրս գալով տաղաւարից, երկար թափառում էի գիշերային մթութեան մէջ: Կարծես, հազար ու մէկ սատանաներ պտոյտ էին գալիս իմ գլխում.երբեմն մտածում էի՝ գնամ Ասլանին ու Սագօյին խեղդեմ իրանց քնած տեղում: Յետոյ ինձ ու ինձ փոշմանում էի, ասելով՝ «չէ՞ որ նրանք մոռացան բոլորը, նրանք ներեցին ինձէ: